

5.11. Արտոնագրային գործունեությունը 2007 թվականին

Ըստ ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարության մտավոր սեփականության գործակալության տեղեկատվության, 2007թ. հանրապետությունում արդյունաբերական սեփականության օբյեկտների (գյուտերի, օգտակար մոդելների, արդյունաբերական նմուշների, ապրանքային նշանների և ֆիրմային անվանումների) իրավական պահպանության հետ կապված գործունեությունն ունեցել է հետևյալ պատկերը.

Գյուտեր և օգտակար մոդելներ: 2007թ. ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարության մտավոր սեփականության գործակալություն է ներկայացվել 130 գյուտի և 17 օգտակար մոդելի հայտ, որոնցից 141-ը՝ ազգային, 6-ը՝ օտարերկրյա հայտատուներից: Գործակալության գործունեության ընթացքում՝ 1992թ-ից մինչև 2007թ. դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածում, ստացված հայտերի ընդհանուր քանակը կազմել է 2715: 2007թ. ազգային հայտատուներից ստացված հայտերի քանակը 2006թ. համեմատ նվազել է 33.8%-ով: 2007թ. ազգային հայտատուների կողմից ներկայացվել են գյուտերի 3 միջազգային հայտեր: 1994-2007թթ. ընթացքում մտավոր սեփականության համաշխարհային կազմակերպություն է ուղարկվել 49 գյուտի հայտ:

Եվրասիական արտոնագրային կոնվենցիայի ընթացակարգով ազգային հայտատուների կողմից 2007թ. ներկայացվել է 2 հայտ:

126 հայտերով անցկացվել է նախնական փորձաքննություն: 152 հայտով կայացվել են որոշումներ նախնական (10 տարվա գործողությամբ) արտոնագիր տալու մասին: 14 հայտերով անցկացվել է փորձաքննություն, որի արդյունքում կայացվել են որոշումներ օգտակար մոդելի արտոնագիր տալու մասին: 10 հայտով կայացվել են որոշումներ գյուտի հայտը հետ կանչելու մասին, 2 հայտով կայացվել են որոշումներ օգտակար մոդելի հայտը հետ կանչելու մասին:

Ապրանքային նշաններ և արդյունաբերական նմուշներ: 2007թ. ազգային ընթացակարգով Մտավոր սեփականության գործակալություն է ներկայացվել ապրանքային նշանի գրանցման 1477 հայտ (882-ը կամ 59.7%՝ ազգային հայտատուներից) և ապրանքի ծագման տեղանվան օգտագործման իրավունքի 1 հայտ: 2006թ. համեմատ ազգային հայտատուներից ստացված հայտերի քանակը նվազել է 7.0%-ով: Օտարերկրյա իրավաբանական անձանցից ստացված հայտերի քանակը ՀՀ ազգային ընթացակարգով ավելացել է 21.2%-ով:

1450 հայտերով կատարվել է նախնական փորձաքննություն: Հայտատուների կողմից հետ է կանչվել 60 հայտ, իսկ 80 հայտի նկատմամբ կայացվել է մերժման մասին որոշում: Գրանցվել են ապրանքային և սպասարկման 1163 նշաններ և կայացվել է ապրանքի ծագման տեղանվան օգտագործման իրավունք տալու մասին 1 որոշում:

2007թ. նշանների միջազգային գրանցման մասին մադրիդյան համաձայնագրի շրջանակում ՀՀ նշանաբ ստացվել է ապրանքային նշանների միջազգային գրանցման մասին 2400 ծանուցում: Նախնական մերժման մասին որոշում է կայացվել 403, իսկ վերջնական մերժման մասին՝ 420 միջազգային գրանցումներով: Ապրանքային նշանների միջազգային գրանցումներով կայացվել են 2477 որոշումներ ապրանքային նշանին իրավական պահպանություն տրամադրելու վերաբերյալ:

2007թ. գործակալություն է ներկայացվել 18 արդյունաբերական նմուշի հայտ, այդ թվում՝ 7 ազգային և 11 օտարերկրյա հայտատուներից:

Ֆիրմային անվանումներ: 2007թ. գործակալություն է ներկայացվել ֆիրմային անվանման գրանցման 4655 հայտ: Գրանցվել է 4475 անվանում, մերժվել է 180-ը: Ֆիրմային

անվանման մեջ «հայ», «Հայաստան», «հայկական» բառերի և դրանց թարգմանությունների օգտագործման համար տրվել է 21 թույլտվություն:

Ուրոտին վերաբերող հրապարակումներ: 2007թ. հրատարակվել է «Արդյունաբերական սեփականություն» պաշտոնական տեղեկագրի թվով 4 համար: Տեղեկագրերը հրապարակվել են հայերեն և ռուսերեն, որոնց մեջ պաշտոնական տեղեկություններ են հրապարակվել 165 գյուտի, 11 օգտակար մոդելի, 25 արդյունաբերական նմուշի արտոնագրերի, 1218 գրանցված ապրանքային և սպասարկման նշանների, 349 ապրանքային նշանների գրանցման գործողության երկարաձգման մասին, ինչպես նաև տեղեկություններ հանրահայտ ճանաչված ապրանքային նշանների, գրանցված ֆիրմային անվանումների հայտերի, արտոնագրերի և ապրանքային նշանների զիջման պայմանագրերի և լիցենզային պայմանագրերի մասին: Գյուտի հայտի պաշտոնական հրապարակման և համընդհանուր ծանոթացման նպատակով տպագրվել է «Գյուտերի հայտեր» պաշտոնական տեղեկագրի թվով 12 համար:

Լիցենզային և զիջման պայմանագրերի գրանցում: 2007թ. ընթացքում քննարկվել և գրանցվել է 95 պայմանագիր, որից 77-ը՝ ապրանքային նշանների զիջման, 15-ը՝ ապրանքային նշանների օգտագործման լիցենզիա տալու մասին, 1-ը՝ գյուտի արտոնագրի զիջման մասին, 2-ը՝ գյուտի արտոնագրի օգտագործման հասարակ լիցենզիա տալու մասին: Ապրանքային նշանների զիջման պայմանագրերը կնքվել են ինչպես օտարերկրյա, այնպես էլ ազգային իրավաբանական անձանց միջև:

Ֆինանսական ցուցանիշներ: 2007թ., որպես պետական տուրք, ՀՀ պետական բյուջե է մուտքագրվել 295.7 մլն. դրամ, որի 61.2%-ը (181.0 մլն. դրամ)՝ ապրանքային նշանների և արդյունաբերական նմուշների իրավական պահպանության գծով, 12.0%-ը (35.4 մլն. դրամ)՝ ֆիրմային անվանումների իրավական պահպանության, 1.0%-ը (3.0 մլն. դրամ)՝ գյուտերի և օգտակար մոդելների իրավական պահպանության գծով, 20.0%-ը (58.9 մլն. դրամ)՝ պետական գրանցամատյանների վարման, 4.1%-ը (12.2 մլն. դրամ)՝ զիջման մասին և լիցենզային պայմանագրերի գրանցման, 1.7%-ը (5.1 մլն. դրամ)՝ բողոքների քննարկման և 0.1 մլն. դրամ՝ այլ գործողությունների գծով:

2006թ. համեմատ զանձված գումարների չափը նվազել է 36.0%-ով:

Արտոնագրային գործունեության ցուցանիշները, 2002-2007թթ.

(միավոր)

	2002	2003	2004	2005	2006	2007	
Ստացված գյուտերի և օգտակար մոդելների հայտերի ընդհանուր քանակը	222	161	144	231	214	147	
Ներկայացված արդյունաբերական նմուշների հայտերի քանակը	15	23	41	20	28	18	
Ներկայացված ապրանքային նշանների հայտերի քանակը	620	927	1855	1449	1439	1477	
Ներկայացված ֆիրմային անվանումների հայտերի քանակը	3105	3194	3370	3058	3694	4655	
Տրվել է	գյուտի արտոնագիր	152	169	159	126	213	165
	օգտակար մոդելի արտոնագիր	19	7	11	20	27	11
	արդյունաբերական նմուշի արտոնագիր	10	12	23	44	17	25
	ապրանքային նշանի վկայագիր	654	602	1095	1271	1098	1167